Կիսակատար մխիթարութիւն մի տուի, զրուցածիս ինքս ևս համոզուած չլինելով։ Սակայն և այնպէս անօգուտ էր ցաւիլը. Ս. Կարապետ եկեղեցին 'ի Նախիջևան չինելուն միջոց, Նիսվիթայի Տէրտիրոջ խորհուրդ հարցնող չէ եղած, և ոչ նորա անգոհութեան պատճառաւ պիտի փակէին այն եկեղեցին։ — Երկու ժամ մնալով գիւղիս մէջ, երեկոյեան զովիկ օդով դարձանք 'ի Նախիջևան, մնացեալ գեղերուն այցելութիւնը ուրիշ օրուան թողլով։

Սալայի և Նիսվիթայի մէջ փնտռածներս չգտնելով, կարելի էր միւս գեղերը դանց առնել, այլ որովհետև երկար ճանապարհ կտրելով անցընելով եկած էի 'ի Նախիջևան, որպէս զի յապագայն ցաւելու առիթ չունենամ, օր ընդ մէջ անցնելով, Համբարձման տօնին նախընթաց օրը՝ միւս երկու գեղերու այցելութեան ելանք, Սրգոյ Տէր Սարգիս Ոսկերչեան քահանային հետ 'ի միասին։ Այն երկու գիւղերն, այսինքն Զալթը (հին 'Ղրիմեցի անուամբ Օրգալան) և Թոփթի ('ի 'Ղրիմ Թափլու կը հնչէ) նախընթաց երկու գեղերուն կողմը կ'իյնան, Նախիջևանու արևմտեան հիւսիսային դին՝ այս երկուքն ևս բազմամարդ գիւղեր են, մէկմէկու մօտ, այնպէս որ մէկէն միւսը կ'երևայ, քաղաքէն երկու ժամու ճանապարհ հեռաւորութեամբ։

Մեծ Սալայէն յետոյ՝ բարեկարգ գիւղն Զալթը է. գիւղացիք ունեւոր են, եկեղեցին փառաշէն նուիրեալ 'ի պատիւ Համբարձման Փրկչին։ Այլ այս գիւղին գիւղացւոց տարազը, ինչպէս ևս յետագայ Թոփթիի, աւելի հնաձև է կամ թաթարաձև, մինչդեռ Սալացիք՝ արք և կանայք, սկսած են Եւրոպական ձևոց յարմարիլ։